ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ին

ԿԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 2. Օրենքի կիրառման ոլորտը

1. Սույն օրենքը տարածվում է կերի և կերային հավելումների արտադրության (ներառյալ՝ առաջնային) և շրջանառության փուլերում ծագած հասարակական հարաբերություններին մասնակից բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ կերի շղթայի օպերատորների և կերի անվտանգության համար պատասխանատու (պաշտոնատար) անձանց վրա:

2. Սույն օրենքը չի տարածվում՝

1) ընտանեկան օգտագործման համար նախատեսված կենդանիների կերերի արտադրության, օգտագործման կամ պահման վրա.

~~2) գենետիկորեն ձևափոխված կերերի արտադրման, օգտագործման (ներառյալ՝ վերջինիս իրացումը շուկայում), ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման հետ կապված հարաբերությունների վրա.~~

3) այն կենդանիների կերակրման վրա, որոնք նախատեսված չեն սննդամթերքի պատրաստման համար.

4) ընտանի կենդանիների համար նախատեսված կերերի մանրածախ վաճառքի վրա.

5) Հայաստանի Հանրապետության տարածքում տարանցիկ փոխադրվող կերի և կերային հավելումների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ տարանցիկ փոխադրումը կատարվում է բաց տարաներով, որը կարող է վտանգ ներկայացնել կենդանիների և մարդկանց առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին:

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետությունում կերի անվտանգության ապահովման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորություններն են՝

1) կերարտադրության և կերօգտագործման, ինչպես նաև կերիրացման բնագավառում միջազգային համագործակցության իրականացումը.

2) կերարտադրության նպատակով օգտագործվող օրգանական, անօրգանական, թունավոր, անցանկալի նյութերի ցանկի հաստատումը.

3) կերի փորձաքննության և նմուշառման կարգի սահմանումը.

4) կերի արտադրության տեխնոլոգիական հրահանգին և բաղադրագրին ներկայացվող պահանջների հաստատումը.

5) Հայաստանի Հանրապետությունում կերարտադրության նպատակով օգտագործվող հատուկ նշանակության նյութերի և կերային հավելումների կիրառությունն արգելված համարվող նյութերի ցանկի հաստատումը.

6) կերի անվտանգության նորմատիվների հաստատումը.

7) վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (ՎՎԿԿՀ) համակարգերի ներդրման ժամանակացույցի (ըստ արտադրության ոլորտների) սահմանումը.

8) վտանգավոր կերի օգտահանման ու ոչնչացման կարգի սահմանումը.

9) կերերի փոխադրմանը և պահպանմանը ներկայացվող պահանջների սահմանումը.

10) կերի շղթայի օպերատորի գործունեության եզրակացություն տալու կարգի սահմանումը.

11) կերի և կերային հավելումների ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման ընթացակարգի սահմանումը.

«11.1) կերային հավելումների պետական գրանցման, մերժման, կասեցման և դադարեցման կարգի հաստատումը

12) Հայաստանի Հանրապետությունում կերի անվտանգության միջազգային չափանիշներին ներդաշնակ ազգային չափանիշների և պահանջների ներդրման ապահովումը.

13) սույն օրենքից բխող այլ իրավական ակտերի ընդունումը.

14) սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

«Հոդված 16.1 ԿԵՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄՈՒՄԸ, ՄԵՐԺՈՒՄԸ, ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է կերային հավելումների արտադրությունը, ներմուծումը, պահպանումը, բաշխումը, իրացումը և կիրառումը, եթե դրանք գրանցված են Հայաստանի Հանրապետության համապատասխան նախարարությունում:

2. Կերային հավելումների պետական գրանցումը, մերժումը, կասեցումը և դադարեցումը իրականացվում է Կառավարության սահմանած կարգի համաձայն:

3. Կերային հավելումների պետական գրանցման համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» օրենքին համապատասխան: